# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# ՈՒՍՈՒՄՆԱ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

Ք.Հրազդան

Մենք, ներքո ստորագրողներս, մի կողմից Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը /այսուհետև ԿՏՊՔ/ ի դեմս ՏՆՕՐԵՆԻ Պ/Կ՝ Վ.Ս.ԹՈՎՄԱՍՅԱՆԻ մյուս կողմից

«Արմավիր դենտ» ԱՁ

/ձեռնարկության, հաստատության, կազմակերպության անվանումը

ՏՆՕՐԵՆ Գ. Վ. Հարությունյանի

/պաշտոն, անուն, ազգանուն/

«Ատամնատեխնիկական գործ»

մասնագիտության ուսանողների գործնական պարապմունքները և ուսումնա-արտադրական պրակտիկաներն անցկացնելու վերաբերյալ կնքում ենք սույն պայմանագիրը

1. Ձեռնարկությունը /հաստատությունը, կազմակերպությունը/ պարտավորվում է

1.1 ԿՏՊՔ-ի կողմից ներկայացված օրացուցային պլանի համապատասխան 20 տեղ հատկացնել ուսանողների գործնական պարապմունքները և ուսումնա-արտադրական պրակտիկան անցկացնելու համար։

1.2 ԿՏՊՔ-ի հետ համաձայնեցված կարգով /պրակտիկայի անցկացման ժամանակացույցին համապատասխան/ իրականացնել ուսանողների աշխատանքային տեղերի շրջափոխումը, որպեսզի նրանք հնարավորին չափ ծանոթանան ձեռնարկության /հաստատության, կազմակերպության/ գիտաարտադրական և տնտեսական գործունեությանը։

1.8 Ուսանողների պրակտիկայի ներկայանալը ենթարկել հաշվառման Ուսանողների կողմից տվյալ ձեռնարկությունում /հաստատությունում կազմակերպությունում/ սահմանված աշխատանքային ռեժիմի և կանոնների խախտման դեպքի մասին անմիջապես տեղյակ պահել ԿՏՊՔ-ի տնօրինությանը։

1.4 Պրակտիկայի ավարտից հետո յուրաքանչյուր ուսանողի համար տալ բնութագիր, նրա աշխատանքի ու կազմած հաշվետվության, որակի և կարգապահության մասին։

2.ԿՏՊՔ-ն պարտավորվում է՝

2.1 Ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկան սկսելուց առաջ ձեռնարկության / հաստատության, կազմակերպության / հետ համաձայնեցնել պրակտիկայի անցկացման ծրագիրն ու ժամանակացույցը։

2.2 Ապահովել ուսանողի կողմից ձեռնարկությունում հաստատությունում, կազմակերպությունում / սահմանված աշխատանքային ռեժիմի և կարգապահական կանոնների պահպանումը:

2.3 Ձեռնարկության / հաստատության, կազմակերպության / տարածքում ընդհանուր ղեկավարի միջոցով պահպանել անվտանգության տեխնիկայի, հրդեհային անվտանգության և այլ գործող կանոնների պահանջները և կրել պատասխանատվություն դրանց խախտման համար:

2.4 Պրակտիկան և գործնական պարապմունքները սկսելուց ոչ ուշ քան երկու շաբաթ առաջ ձեռնարկությանը /հաստատությանը, կազմակերպությանը / ներկայացնել ուսանողների ցուցակը:

2.5 ԿՏՊՔ-ն պարտավորվում է պրակտիկայի անցկացման նպատակով յուրաքանչյուր ուսանողի համար վճարել 5000 ՀՀ դրամ:

3. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պայմանագիրն հայտարարել չեղյալ, եթե մյուս կողմը չկատարի իր ստանձնած պարտականությունները

4. Պայմանագրում տեղ չգտած հարցերը լուծվում են ՀՀ գործող օրենքով:

5. Պայմանագիրը կնքվում է երեք տարի ժամկետով, սկսած **2023** թվականից մինչև 2026 թվականը:

6. Պայմանագիրը գործում է Ք. Հրազդանում, երկու հավասարազոր օրինակներից, մեկական օրինակ յուրաքանչյուրի համար:

7. Կողմերի իրավաբանական հասցեները և այլ տվյալները:

| | |
|---|---|
| Պատվիրատու<br>Կոտայքի տարածաշրջանային<br>Պետական քոլեջ<br>2301 Ք. ՀՐԱԶԴԱՆ | «Արմավիր դենտ» ԱՁ<br>2301 ԿՈՏԱՅՔ |
| ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ 96 | Ք.ՀՐԱԶԴԱՆ, ԱՆԴՐԱՆԻԿԻ Փ (Շ) 42 |
| ՀԵՌ. 060-27-32-32<br>Հ/Հ160254503016 | ՀԵՌ. 093195107<br>ՀՎՀՀ 40523614 |
| ՏՆՕՐԵՆԻ ՊՈ ______ Վ.Ս. ԹՈՎՄԱՍՅԱՆ | ՏՆՕՐԵՆ ______ Գ.Վ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ՊՐԱԿՏ. ՂԵԿԱՎԱՐ ______ Լ. ՍԵՄԻՐՋՅԱՆ | |
| «24» 05 2023թ. | «24» 05 2023թ. |